

Մայր Աթոռից իրենց պաշտօնատեղին վերադարձան Սանահնոյ վանահայր Դարեգին և պիսկոպոս Սաթունեանը, կարսի փոխանորդ Կիւրեղ վարդապետը, Տաթևի փոխանորդ Ներսէս վարդապետը և Բետարքիոյ Կանաքատորիայի նախանդամ Յուսիկ վարդապետը:

Վեհափառ Հայրապետի հրամանու Մայր Աթոռ վերադարձաւ Բարգէն վարդապետը և Նշանակութեց անդամ տղարանական վարչութեան:

Յուլիսի 6-ին Հայրապետական կոնդակով վանական կառավարութեան անդամ Նշանակուեցին Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանը, Բարգէն վարդապետ Ազաւելեանը և Զաւէն վարդապետ Մ. Բաբայեանը, վերջինս նշանակուեց նաև հիւրընկալ Մայր Աթոռոյ:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԹՈՒՄԱՅ ԵԿԵՂԵՑԻ

«С. Петерб. Вѣдомости» թերթն հազորդում է հետեւեալը. Մի արժանահաւատ անձնաւորութիւն գրում է մեզ, որ Պետրոպաւլովսկ զբանակիր նաւի հետ ծովի յատակն ընկդմած Սուրբ Նիկողայոսի պատկերը ծովի երեսն է բարձրացել և որ այդպատկերը գտել են և ուղարկել Պետերբուրգ:

«Пѣрк. Вѣстникъ» թերթն հազորդում է, որ Սամարայի թեմում առաջնորդի թոյլտւութեամբ և հոգևորականութեան նախաձեռնութեամբ կազմւում է և ծրագրւում «հովուական համաժողովներ»: Սամարայի գաւառի վեցերորդ շրջանի հոգեռ-

բականների համաժողովը կարեսը է գտել հովուական համաժողովների հրաւերել տարեկան երեք անդամ, 2—3 օրով. փոքր համար առաջին համաժողովը հրաւերուել է մայիսի երկրորդ կիսին։ Սամարայի նահանգի Բուգուրուսլան գաւառի 6-դ շրջանի հոգեորականների համաժողովը վճռեց հրաւերել քարոզչական նիստեր և որոշեց այդ նիստերին պաշտօնական ձև չըտալ, այլ թողնել քահանաների ազատ կամքին։ Փետրվարին տեղի ունեցան նօվուրգէնսիկ գաւառի գործակալութիւններից մինի հոգեորականների նիստերը ներքին երուսլանում և Զէրեւ պահ գիւղում։ Քահանայը իրենք խիստ գոհ են, որ այդ ժողովների շնորհիւ վերջ է տրւում իրենց կղզիացած և անջատ կեանքին։ Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ մի գործակալութեան մէջ տարածութեան մեծութեան պատճառով նիստերն երկու կեդրոններումն են տեղի ունեցել։

Անշուշտ մեծ և բարերար նշանակութիւն կունենան քահանաների համախմբումներն ու խորհրդածութիւնները իւրենց հովիւնների և հօտի համար։ բայց ցաւալի է, որ մեր ոչ միայն գործակալութիւնների հոգեորականները ոչ մի համախմբում և խորհրդածութիւններ չունին եկեղեցու և հօտի կրօնական կարիքների մասին, այլև ամբողջ թեմերում այդպիսի մի ծգառումն և գէպք տեղի չի ունեցել։ Ցանկալի է, որ իրաւատէր անձինք ուշադրութիւն դարձնեն թեմերում և վիճակներում այդ մեծ կարիքի վրայ և փոքրիկ համաժողովներով հետզհետէ պարզեն ժողովը կրօնական բարոյական կարիքներն և դարմանելու միջոցների մասին խորհեն։

Այս տարուայ ապրիլի 18 ին լրացաւ «Կրօնական լուսաւորութիւն տարածող ընկերութեան 23 ամեակը Ս.Պետերբուրգում»։ Լոյս տեսած 23-դ տարուայ հաշուից երկում է այդ ընկերութեան բազմակողմանի և բեղմնաւոր գործունէութիւնը։ Ընկերութեան խորհուրդն ու նրան կից եղած հիմնարկութիւններն յօդուակեղեցւոյ ի մի են համախմբել ընդունակ և գործունեայ բազմաթիւ ոյժեր, որոնք սիրով և եռանգով ծառայում են ժողովրդական լուսաւորութեան գործին։ Ընկերութիւնն ունի իւր ամսաթերթը, որը բաւական տարածուած է։ Բացի ամսաթերթից ընկերութիւնը վերջին տարուայ ընթացքում հրատարակել է 62,000 օրինակ գրեթե՝ բացի զգաստութեան ընկերութեան հրատարակած 260,600 օրինակներից։ Ընկերութեան գրապահութեան գալուել է 82,779 ուուրլու գիրք։ Ընկերութեան 4

դլիսուոք գըագարաններից մի տարուայ ընթացքում դուրս է տուած 31,000 օրինակ դիբը, երկու ընթերցարաններին այցելել են 14,000 մարդ։ Ընկերութեան ուսումնաբաններում ուղղութեամ են 700 հոգուց աւելի։ Դասախոսութիւններ են տեղի ու սենում 81 տեղ՝ եկեղեցիներում, զարոցներում, որա՞ներում, դիշերային օթևաններում, դորձարաններում և տրհեստանոցներում։ Մի տարուայ ընթացքում տեղի է ունեցել 5837 դասախոսութիւններ, որոնց ներկայ են եղել 2,204,455 ունկնդիթներ։ Բացի վերոյիշեալներից կին անդամուհիք դասախոսութիւններ են կարգացել բանտերում, հիւանդանոցներում և աղքատանոցներում։

Եալու դետի մօտ տեղի ունեցած ճակատամարտի նկարագրութիւնը ճապոնական և ռուսական աղքեւրներից՝ պարզ ցոյց է տալիս, թէ ինչ ցաւալի էր վերաւորածների վեճակը։ Ջնուուոլները ստիպուած են եղել թողնել ռազմիկների շարքերը և աշխատել վերաւորներին։ Հետացնել պատերազմի դաշտեց, իսկ որոնց հեռացնելու ժամանակ և հնարաւորութիւն չեն ունեցել, նրանց ժողովել են ճապոնացիք։ Սրանից պարզ երեսում է, որ զօրքի մէջ գթութեան եղբայրների թիւը շատ փոքր է և մեծ կարեք է զգացւում մեծացնելու և լացնելու նրանց շարքերը։ Բայց նպատակին ինչպէս հասնել, որտեղից կարելի է վերցնել ցանկացող, հարկաւոք մարդկանց։

Մուկվայում հրատարակուող յայտնի «Русскія Вѣдомости» թերթը մատնանիշ է լինում ուսուական վանքերի վրայ և գրում է հետևեալը։

— Այս հարցի պատասխանը պատերազմական այլ հեռագիրների հետ միասին երեսոց և աննկատելի անցաւ։ Ինչ որ փոքր վանքի միաբանութիւն, կարծեմ նովդորոդուկի նահանդի, ցանկութիւն յայտնեց գթութեան եղբայրների պարտաւորութեամբ նեռաւոր Արևելք դնալու և կարծեմ իոկոյն նրանցից մի քանիսն առանձին ընտրութեամբ ուղարկուեցին Արևելք։ Այդ թոյլ և մասնակի օրինակը արժանի է ամենաընդարձակ ուշադրութեան և հետեւողութեան։ 1898 թուի տեղեկութիւնների համեմատ Ռուսաստանում այդ թուականին հաշւում էր 8080 կուսակրօններ—6988 վանականներով (մոնթերով)։ այդ թուականից անշուշտ վանականներն աւելացած կլինին։ Բնականաբար ժագում է այն միտքը, որ աշխարհի վայելչութիւններից հրաժարուած և Աստուծուն նուիրուած մարդիկ առաջինը

պէտք է լինին իրենց հայրենիքին այդ կեսպ ծառայող, որովհետև այդպիսով նրանք ծառայած կլինին և իրենց գաղափարին՝ ուզնել զանձն ի վերայ բարեկամնեն։ Այստեղ նրանց առաջ ընտարձակ ասպարէզ կը բացուէր արտայագաելու ոէրը գէպի իրենց մերձաւ որները, գէպի այն անձինք, որոնք այդպիսի սիթոյ կարիք ունին։ Թէ միայն կրօնաւորների մասնակցութիւնն այդպիսի գործում բաւարար չեր լինիլ, բայց և այնպէս փրկելով վերահաս մահուանից շատ շատերին ու թեթեացնելով նրանց առանձանքները, ահագին բարոյական նշանակութիւն կունենար նրանց այդ տեսակ գործունէութիւնը։ Վերաւորներին օգնող խմբեր կազմակերպելու գործում կարող էին մեծ դեր խաղալ վանքերը, որոնք իրենց միջոցներից հստաւորութիւն ունին հայթայթելու հարկաւոր ծախսերը, որովհետեւ որանցից շատերը կաւրանները, ահագին միջոցներ ունին։

Այսպիսով մեզ թւում է, որ թէ մարդիկ ունենք և թէ նիւթական միջոցներ։ Միայն պէտք է ցանկալ, իսկ այդ ցանկութիւնն անհրաժեշտողէն պարտաւոր է երևան գալ։

—Ցիշեալ նպատակայարմաթ դիտողութեան մենք մեր կաղմից կարող ենք տւելացնել, որ ճէնց այդ է եղել վանքերի և վանսականութեան ոկզբնական նպատակը՝ սկսած չորսորդ դարու ոկզբներից։

Վանքերն ու վանսականները դոյլութիւն են առել իրեւ հիւանդանոցներ և հիւանդախնամներ, իբրև օթեաններ և այլոց ծառայողներ, իբրև ուսումնարաններ և ուսուցչներ, երբեմ անձնականից հրաժարուածների և այլոց ծառայելու գործին նուիրուածների համախմբումներ և կարծում ենք, որ 15000-ից աւելի վանսականներ ունեցող Ռուսաստանի վանքերը դժութեան մի քանի հազար եղբայրներ կուղարկեն պատերազմի դաշտը վերաւորներին խնամելու և որքան ցիշում ենք, մի քանի վանքերից գնալու պատրաստակամութիւն յայանազնեցն ել եղան՝ թէ և սահմանափակ թուով։

ԲՈՂՈՔԸԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ցիունեանների վերաբերեալ օրէնողութեան երկրորդ պատրազրամֆի ոչնչացումով առաջ եկած խուլութիւնը գերմանիայում դեռ չի խաղաղուել։ Բողոքական հասարակութեան զգացմունքների արտայայտիչ հանգիստացան գերման բոլորական թեան երկու օրդ անները՝ պաշտօնական՝ «Գերմանական